

ԼՈՒԱՅԱՐԱՐՈՒՅԻՆ

Կոտորածի տարին այրի մընաց ան:
 Հասարակաց փոսերուն
 Մէջ ամուսինն իր կը հանգչի... կը նիրհէ
 Տունն իր փոքրիկը սիրուն:
 Օտար յարկի տակ, ձիւն ձըմռով, դեռ կանուխ,
 Ճրագին մըխոտ լոյսին տակ,
 Ան կը լըւայ, տաշտին առջեւ, կը լըւայ՝
 Սոթտած թելերն ըսպիտակ:
 Դեռ մանկամարդ է եւ աղուոր. դեռ իր սեւ
 Վարշամակին տակ ունի
 Կըրթոտ աչքեր զինուած սուգին, ժոյժին դէմ,
 Պատերազմող մը գաղտնի:
 Սըրտին մէջ բորբ յաղթահարել չէ կըրցած
 Մայրութիւնն իր կուսութեան.
 Մարդը սիրո՛յ կը հրաւիրէ, տղան՝ կաթի
 Իր մատղաշ ծոցը բուրեան:
 Բայց կը լըւայ՝ Յանուն պատառ մը հացի
 Յանուն միակ իր որդւոյն
 Ապագային՝ ան կը դաւէ հասակին
 Վարդերու թարմ հետտութիւնն:
 Առանձին է գետնայարկին մէջ խոնաւ,
 Իր վըշտին հետ առանձին,
 Մազերն արծակ, սանդալներն իր ոտքերուն՝
 Մերկ թելին վրայ՝ երկու ծին:
 Կաթսային դէմ, կաթսան գըրկող բոցին դէմ,
 Փըրփուրին մէջ օճառի՝
 Ուրիշներուն աղտին ըսպաս կը դընէ
 Սիրտն որբ, մարմինը՝ գերի: